զԲաղկեդոնիս յարգեր եւ զովեր եւ զկրօնս Հայոց համահրեր. զոր ազդեցին Պետրոս կաթողիկոսին. եւ նա բազում անգամ խրատեալ եւ նա անլուր եղեւ. զոր յետոյ ի բաց եհան յինքենէ եւ նա գնաց յԵրուսաղէմ, եւ ի նոյն տեղին եւս զնոյն առներ. զՅոյնս զովեր եւ զՀայս դարովեր. զի բազումս շփոթեաց. զի էր վերին երեւակայութեամբն Հայ եւ կրօնաւոր եւ առաքինի. եւ ներքին մարդովն եւ խորհրդով երկաբնակ եւ Բաղքեդոնիկ զոր անդ յԵրուսաղեմ ազդեցին զգործս նորա վարդապետի ումեմն Գրիգորի եւ մականուն Բուք վերածայնելոյ(*) եւ նա յԵրուսաղեմ նզովեալ զնա եւ ի սեղանատեղաց եւ ի ժամատեղաց ապտորեալ. զոր յետոյ ի մէջ անկեալ մեզ՝ որդւոցն հաշտեցուցին զնա. եւ նա հարկ եդեալ ի վերայ՝ գնալ յԵրուսաղէմայ եւ այլ զնոյն ոչ առնել։ Զոր եղ յԵրուսաղէմայ եւ զնոյն գործն ոչ եթող. եւ առեալ զայն բաղադրեալ Մեկնիչն ի ձեռն եւ զբազումս ի պարզամտաց ձգեաց ի շփոթեալ յաղանդսն յայնոսիկ եւ ի հերձիկ դաւանութիւն. զի նա հմուտ էր Բաղքեդոնի կրօնիցն։

(*) Գրիգոր վրդ. Բուք, Դարանաղցի պատմագիրն է. որ իր ժամանակագրութեան մէջ (էջ 392-393) նպաստաւոր կ'արտայայտուի Կիրակոսի մասին, որ Մեծ-Անապատի հիմնադիրներէն մէկն էր։